կան տներ ունեցողներ կային աւելի քան հազար տուն, որոնք համարւում էին վերբնակիներ: Այս վերբնակիներն էլ բնիկների հետ սրի մատնուեցան 1918 թ. Օսմանեան երկրորդ արշաւանքի ժամանակ խուժանի ձեռքով:

1878—1918 թ. Ռուսները ո՛չ միայն չոսպէով Օլթին կապեցին Մերդենիկի ճանապարհով՝ Կարսի հետ եւ Բարդուզի ճանապարհով Սարիղամիշ–Կարսի հետ, այլ նեղ ձիաքարշ երկաթուղի կառուցին Կարսից մինչեւ փենեք: Ո՛չ միայն Օլթին ունեցաւ կարգին լայն փողոցներ, սրբատաշ շինութիւններ, կրպակներ, տաճարներ, զօրանոցներ, մթերանոցներ եւ մեծամեծ չէնքեր այլ եւ այլ հիմնարկութիւնների համար, այլ եւ բնիկներն ու վերբնակիներն էլ գեղեցիկ տներ չինեցին ու զարդարեցին քաղաքը:

Օլթի վտակի հետ զուգընթաց հարաւից–հիւսիս է հոսում Բարդուզ–չայ (Պարտիզաց փոր) վտակը, որ բղխում է Կիրասլի (Կեռասի) եւ Ալակիչէր լ–ըից, նախ ուղղուում է հարաւ–արեւմտա–հարաւ, ապա թեքւում է արեւմուտք եւ վերջը արեւմտահիւսիս, կատարում է բոլորակ չրջան մինչեւ Օլթիի հետ միախառնուելը: Բարդուզ–չայը (Պարտիզաց փորը) նախ ոռոգում է Կուչի եւ Վարդանեկ գեղերը եւ ապա միանում է Բաշքէօյ եայլայից եկած Կուրբեճի առուակին, առաջ է գնում եւ խառնւում է Սողանլուի